# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Ջերմուկ** **6/օգոստոսի/2020**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...6... անդամներ:

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ** Սամվել Մարգարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հայկ Դավթյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի ետ Արմինե Ղազարյանը:

**Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը**

**Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թաղևոսյանը**

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 6-ի արտահերթ նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը.

1.1. Ջերմուկ համայնքի կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը ամբողջությամբ չկայացած հայտարարելու թույլտվություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի 2020 թվականի հունվարի 17-ի № 8-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ------6------ Դեմ------0------ Ձեռնպահ------0------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 58-րդ կետի հիման վրա՝

1. Թույլատրել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմին համայնքի կարիքների համար ախտահանման սարքերի ձեռքբերման նպատակով 2020 թվականի հուլիսի 17-ին հայտարարված՝ «ՋՀ-ԱԽՏՍ-ԳՀԱՊՁԲ-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնման ընթացակարգը հայտարարելու չկայացած՝ գնման պահանջի դադարման հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ------6------ Դեմ------0------ Ձեռնպահ------0------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 8-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածներին համապատասխան, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին» N 8-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

*ա) որոշմամբ հաստատված Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեի Հատված 1-ում՝*

- **1000-րդ տողի 4-րդ սյունակի «516463.2» թիվը փոխարինել «531075.2» թվով, 6-րդ սյունակի «0» թիվը փոխարինել «14612.0» թվով*
- *1200-րդ տողի 4-րդ սյունակի «137051.1» թիվը փոխարինել «151663.1» թվով, 6-րդ սյունակի «0» թիվը փոխարինել «14612.0» թվով,*
- *1260–րդ և 1261–րդ տողերի 4-րդ և 6-րդսյունակներում «0» թիվը փոխարինել «14612.0» թվով*

բ) որոշմամբ հաստատված Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեի *Հավված 2-ում՝*

- *2000-րդտողի 4-րդ սյունակում «686517.0» թիվը փոխարինել «701129.0» թվով, 6-րդ սյունակում «155640.1» թիվը փոխարինել «170252.1» թվով*
- *2900-րդ տողի 4-րդ սյունակում «164601.3» թիվը փոխարինել «179213.3» թվով, 6-րդ սյունակում «35580.1» թիվը փոխարինել «50192.1» թվով*
- *2950-րդ և 2951-րդ տողերի 4-րդ սյունակում «59882.6» թիվը փոխարինել «74494.6» թվով, 6-րդ սյունակում «2500.0» թիվը փոխարինել «17112.0» թվով*

գ) որոշմամբ հաստատված Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեի *Հավված 3-ում՝*

- *4000-րդ տողի 4-րդ «686517.0» թիվը փոխարինել «701129.0» թվով, 6-րդ սյունակում «155640.1» թիվը փոխարինել «170252.1» թվով*
- *5000–րդ տողի 4-րդ և 6-րդ սյունակներում «206165.0» թիվը փոխարինել «220777.0» թվով*
- *5110-րդ տողի 4-րդ և 6-րդ սյունակներում «150400,0» թիվը փոխարինել «165012,0» թվով*
- *5113-րդ տողի 4-րդ և 6-րդ սյունակներում «105674.8» թիվը փոխարինել «120286.8» թվով*

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի բյուջեն՝ 2020 թվականի օգոստոսի 6-ի դրությամբ՝

*ֆոնդային բյուջեի եկամուտներ՝ 220.777.000 ՀՀ դրամ*

*ֆոնդային բյուջեի ծախսեր՝ 220.777.000 ՀՀ դրամ*

*Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտներ ՝ 751.653.900 ՀՀ դրամ*

*համայնքի բյուջեի ծախսեր՝ 751.653.900 ՀՀ դրամ*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-----6------ Դեմ-----0------ Ձեռնպահ-----0------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ն/

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | ստորագրություն |
| --- | --- |
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա |
| Բագրատյան Արտակ Կաղենի | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | բացակա |

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ________________

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը ________________